43. ՔՅԱ̈ՍԻԲ ՏԸՂԱՆ

Մեհետ անանում Թաքավերեն տղան՝ Թեմո̄ւրը, ու̄րա̈ն շըքախըմրավը տո̄ւս ա կյաս Թյդաղա ծմակը, հանցու վեր վըերս անե։ Ըտրանք տո̄ւս ըն կյաս մին պեցուր սարու պտոկ, ընդեղ նստես, վեր դինշա̈նա̈նե։ Թեմո̄ւրեն մեծ ծառան դո̄ւլդո̄ւլը յոր ա ունես բիդի հեռուն յիշիս, տսնաս մին փլստրատե տաս պալատ, ըտրան մաշին էլ մին իրիքյնակու նման պեն պսպղե յա տաս։ Կյաս ա, էտ լոխ պըտմես Թեմո̄ւրեն։ Ըտրանք սկսես ըն բիդի էտ պալատը հղե քյինիլը։ Ըտրանք չորս օր ճո̄ւր չըն ինիս խմած։ Տրա հետե կյաս ըն մին ըխպրա թա ճո̄ւր խմին, տըսնաս ըն մին շո̈րերը ճղորտած, քյա̈սիբ տըղա էն ըխպրին ղըրաղեն նստած, մին վըեսկե աման էլ ծեռքեն։

Թեմո̄ւրը տըրանա ճո̄ւր ա ո̄ւղիս։ Էտ քյա̈սիբ տըղան ամանը լըցնես ա, ո̄ւղիս ա տա Թեմո̄ւրեն, էլհա ետ ա տաս։ Թեմո̄ւրը կըղնըվելան նհետ ղա̈մա̈ն տո̄ւս ա ունես, թա տըրան սպանե։

Էտ տըղան ըսես ա. — Մին խըեգյ կաց, ա̈հետ ինձ սպանե։

Քյա̈սիրը էտ ըմանավը սաղ ղորքեն ճո̄ւր ա տաս, լոխճին քմակեն էլ Թեմո̄ւրեն ա ճո̄ւր տաս։ Թեմուրը ինքը շատ խո̄լո̄ւմք մարթ ա ինիս։ Զքելանը վեր մին պենը լա̈վ գյիդա̈ս չի իլա̈լ, մարթու քյոռուղ չի տվա՞լ։

Թեմո̄ւրը էտ տըղեն նըեստա հըրցնես ա, թա.— էտ խե՞ ինձ իրեք հետ ուզեցիր ճո̄ւր տաս, էլհա ետ քշեցեր։

Էն քյա̈սիբ տըղան ըսես ա. — Ցըես ընդըրա հետե չըմ քյըեզ հլըրհա̈լ ճո̄ւր տվալ, քանի վեր տու քրտնքած ըս ըլա̈լ, շատ ծրավծ,

վեր քյրեզ հլբրհալ ճուր տի, նի կկյար քյրեզ, տու հլբրհալ կմբրսիր, ըտրա դարդան յրես քյրեզ ճուր չրմ տվալ, հանցու վեր ծբրվոթունրտ ընցնե։

Թեմուրը յշիս ա, տսնաս, վեր էտ խոլունք տրղա յա, ըտրան յոր ունես, մին ծի եր հընես, ուրան նհետ տընես։

Թեմուրեն էն մեծ ծառան շատ աղվես մարթ ա ինիս, կլոխ ա ընգնես, վեր էտ քյասիբը իմաստուն մարթ ա, ընդրա դարդան Թեմուրեն ըսես ա. — Պա համոթ չի՞, վեր իտի քյասիբ տրղան մեր շրքախրմբեն նհետ շոռ ածինքյ։

Մին խիլլա հղե քյինիլանը ետը հսնես ըն համան պապղե տաս պալատեն տոռնը։ Թեմուրը ուրան ծռեն հրամման ա տաս, վեր քյինի տեսնա էտ տանը հու կա, հու չիկա, միկա ճուր ուքյ օնե, պիրի խմին։ Մին պատառ կնալանը ետը տրսնաս ըն ծառան էն ա սփարթնած, փախած կյաս ա։

Կյաս ա, ըսես.— Թե՛մուր աղա, մին պառավ ինձ մին հարց ա տուվալ, վեր վրեններս տափան կտրալ ա. ըսես ա. «Մեր տանան հու վեր ուղիս ա, թա ճուր խմե, բիդի իմ տուված հրցերեն ջողաբը տա, ընդրանա ետը ճուր խմեմ»։

Թեմուրն ըսես ա. — Մին ասե տեսնամ, էտ հի՞նչ հարցեր ա՞։

— Ա՛ղա, ըսես ա, վեր մին օղտ մորթիքյ, քա՞նե փութ կկյա, վեր խրեգյ ինի, էտ օղտեն մսեն տու տա՞ր ըս տոնրլական, թա թուղլական ըս, քյինիս։

— Բա տո՞ւ հինչ ըսեցեր, լհա անշուկնետ կախ ըրե՞ր։

— Ցրես էլ ըսեցե, վեր օղտեն գյոզակը խրեգյ կը կյա, մաշնակը՝ շատ, մեծը ընդրանա շատ։

Սաղ շրքախումբը կընդ-կընդ քյիս ըն, կրես չրն, թա պռավեն հարցեն ջողաբը տան։

Թեմուր խանը շատ ա հմրնչիս, վեր ուրան շրքախմբումը մին մարթ չիկա, հանցու վեր էտ պռավեն փանդը-փելը գյիդա։ Էն քյասիբ տրղան տրսնաս ա, վեր Թեմուրը հրմրնչիս ա, ըսես ա. — Խանը ապրած կենա, թող յրես քյինիմ, հանցու վեր ջողաբը տամ։

Ամմա դուզն ասած, Թեմուրեն ծառան ուղիս չի, վեր էտ քյասիբ տրղան քյինի պռավեն ջողաբը տա։

Թեմուրը ըսես ա. — Թող մեհետ էլ էտ քյասիբ տրղան քյինի։

Էտ տրղան քյիս ա, ըսես. — Էտ օղտը հինչքան կյա, թա փթած ինի, թա վետած ինի, տարը յրես ըմ։

Էտ պառավը բուրդան ճպղես ա, վեր ընգնես։ Պլատեն տոնները բուրդան պինվաս ըն։ Էտ պլատեն ըռշկեն կաղնած տրղան յիշիս ա,

տրսնաս էն զոլան մին իրիքյնակու նման ախճիգյ էն ա շափաղ-շափաղ ընելավ կյաս։ Ախճիգյը կյաս ա էտ տրղեն յրա պրծնես։ Էտ տրղան սկսես ա փախչիլը։ Ախճիգյը հրսնես ա, ծեռքը տինիս ա ընդրան ջնաղեն։ Էտ տրղան վեր ա ընգնես։ Ախճիգյը ըտրան քաշ ա տաս, տնես ուրան տոնը։ Տրղան եր ա կընաս։ Ախճիգյը մին ստաքան ճրաավ լցնես ա, տինիս ստոլեն յրան։ Տրղան մաննը իրեք հետ թրչիս ա, ետնան սըրփես։ Ախճիգյը պիրիս ա մին կյարմուր խընձոր, մին տենակ, մին նոռնը, մին թոփ ասեղ, մին մկրատ, մին սիպտակ թոխտ տինիս ստոլեն։ Տղան պիրիս ա խընձորը տնակավը մաշան կես ընես տինիս ստոլեն, նոռնըն էլ ա կտրես, տինիս ստոլեն յրան, սիպտակ թոխտը մկրատավը կուտուրես ա, տինիս ստոլեն, ամմա ըսըղնեն նի յա կուխես խընձորին մաշը։

Ստաքանը նշնկես ա, վեր ուղի՞ս ըս համամ քյինիս։ Էտ քյասիբ տրղան վեր ծեռքը քցալ ա ճուրը, մին էլ տուա կալալ, ըտրանավ ուզես ա ասե, վեր ինքյը քյասիբ տրղա յա, ինքյն էլ եխտուտ, բիդի համամ քյինի։

Էն խընձորը, վեր տիրալ ա ընդեղ, ախճիգյը ըտրանավ ուղիս ա ասե. «Իմ սերը իստի կյարմուր ա, բա քու սերըտ հո՞ւնց ա»։

Տրղան վեր խընձորը տընակավը կտրես ա, ուղիս ա ասե. «Իմ սերս քու սերետ նման ա, ասիս մին խընձոր ինի, մաշան կես ըրածդ»։

Էն նոռնավրն էլ ըսես ա. «Իմ սերս իտի հալա մին հատեգյ ա, ետնան տրռնըլական ա մին նոռան մշանք»։ Էն սիպտակ թոխտավը ուղիս ա ասե. «Իմ սերրս իստի թամուզ ա, վեր բուրդան մեթկըտ փոխվե, կդավաճանի՞ս ինձ, թա չէ՞»։ Էն տրղան էլ վեր մկրատավը կուտուրես ա, ըտրանավ ուզես ա ասէ. «Ինձ իստի թքյա-թքյա կտորին, քյըեզ դավաճանել չըմ»։

Ըսըղնեն կուխես ա խընձորը, ըտրանավ ուղիս ա ասե. «Վեր ինձ իստի ծկոտին, քյըեզ դավաճանել չըմ»։

Ըստրանա ետը տրղան խնթրիս ա, էտ ըխճկանը, ըսես. — Խանը էն ա ուրան շրքախըմբավը տրռանը մարաղ կացած, ինձ պեց թողե, քյինիմ։ Ախճիգյը թուլ չի ընես։ Ընդրանք էտ քըշեր քոն ըն ինիս։ Մին էլ ախճիգյը եր ա կնաս, տսնաս լուսացալ ա։ Ախճիգյը տրղեն եր ա կցնես, հղե տինիս։

Թեմուրը պլատեն քշտեն խիլլա կնալանը ետը, կզնվես ա, հղե ինիս, քյիս ուրան երգյիրը։ Ամմա քաղաքեն չորս թրաֆեն պահակ ա տինիս, վեր էն քյասիբ տրղան կյա, հրլբհալ վեգը կըտրին։

Էտ քյասիբը կյաս ա, քաղաքը հրսնես։ Ընդրան տնես ըն, թա

կախ տան։ Հենգյ բոպե վախտ ըն տաս, հանցու վեր ուրան սրտենը ասե։ Ըղեն վեշ մին պեն չի ըսես։

Բուրդան էտ դարըմը հվաքված ժողովուրթը յիշիս ա տսնաս յիրգյինքավը մին սիպտակ ղուշ ա թռչես, կյաս, ժողովուրթավը շորս հետ շոռ տաս, համ էլ մին մեծ ծմերուկ վեր քցիս ժողովուրթեն մաշին, ինքյը թըռչիս, քյիս։ Ծմերուկը ցըրեվ ա կյաս։ Բուրդան էտ քյասիբ տըղան ծծղես ա, համ էլ խնթրես, վեր ուրան թուլ անին, քյինի Թեմուր աղեն կոխկը։

Քյասիբը քյիս ա Թեմուրեն կոխկը, լոխ ըսկսես նաղլ անելը, ըսես.— Խանն ասլրած կենա, էն պառավը ինձ հարց ա տուվալ, վեր մին օղտ մորթի, քանե փութ կկյա, համ էլ վեր մեսը վրետած, փթած ինի, յըես ընդրա տարրն ըմ, թա չէ, էտ ինդի յա նշընըկես, վեր տու քու ըղետ նհետ հեռե տեղա եշալ ըս, շփաղես յըրա եկալ, հանցու վեր ինձ օղիս, պա բալի վեննս կոտրած ա, իրեսրս ղաշա՞նգյ։ Վեր վրեննս կոտրած ինի, ինձ պհլական ը՞ս, թա ըսլական ըս՝ տուս եք։ Յըես ասալ ըմ. «Պհլական ըմ»։

Ըարանա կման էտ տըղան պըտմես ա, վեր ինքյը ըխճըկանը կոշտը քյինիլանը ետը, ըղեն ուրան ըռաշկեն պերալ ա, ստոլեն յրան տիրալ, մին ստաքան ճուր, մին կյարմուր խընձոր, մին տեննակ, մին նոռնը, մին սիպտակ թոխտ, մին մկրատ, մին թոփ ասեղ։ Յըես էլ գյդացալ ըմ ըտրանցավ հինչ ա ուղիս ասե։ Լոխճին շողաբը տուվալ ըմ։

Խընձորը, — ըսես ա էտ տըղան, — նշընըկես ա, վեր յըես քյըեղ սիրիս ըմ էն կյարմուր խընձորեն նման։ Ամմա յըես էտ կլոխ ըմ ընդալ, պերալ ըմ խընձորը կարալ, թա.— «Յըես էլ ըմ քյըեղ սիրիս, սերտըս քու սըրտետ նման ա, ասիս լհա մին խընձոր ինի մաշան կես ըրած»։

Էն ստաքան ճուրը նշնըկես ա, թա ուղիս ը՞ս քյինիս համամ։ Ամմա յըես էրկու հետ ծեռքըս վեր քըցալ ըմ, տուս կալալ, ըտրանավ ուղեցալ ըմ ասիմ, վեր յըես մին քյասիբ, եխտուտ տըղա յըմ, ուղիս ըմ համամ քյինիմ։

Էն նոռնը նշնկես ա, թա իմ սերս մհենգյ մին հատեգյ ա, նոռնու նման, վեր մըծանա, շտննական ա, տրեռնա մեշին հատեգյներեն մշանք։ Ամմա յըես կտրալ ըմ մաշան, վեր իմ սերս համանն ա, ասիս մին նոռնը ինի մաշան կես ըրած։

Էն սիպտակ թոխտը նշընըկես ա, վեր ուրան սերը թամուղ ա, էտ թոխտեն նման, վեր մի պեն պատահե մեր մեշին յըես տա՞րն ըմ, թա չէ։ Յըես էլ թոխտը կըտորալ ըմ։ Տա նշընըկես ա, վեր թա ինձ

խստի կտորեն, հունցու էտ թոխտս յըես ըմ կուտուրես, էլհա իմ սերս կըմնա թա̈մուզ, հունցու էս թոխտս, վեր հինչքան կուտուրես ըմ, էլհա մնաս ա սիպտա̈կ։

Էն թուփ ասեղը նշընըկես ա, վեր թա ինձ ծակոտին, յըես իմ սերսս կհեռանա՞մ, թա չէ։ Յըես էլ ասեղնին քըղեցե խընձո̈րը, ըտրանավ ըսեցե, թա վեր ինձ խստի ծկոտեն, յըես էլհա կսիրիմ։ Հունց վեր խընձո̈րը ծըկոտելան փախչում չի, վեր ինձ էլ ծկոտին, յըես էլ չըմ փախչիլ քու սիրուցըտ։

Տրանց անա կման տղան պըտմես ա էն ծմերուկեն անա, վեր էն ղուշը պերալ ա, վեր քիցալ, ժողովուրթեն մաչին, էն մոմուտեն վեր ինքյը էն ա իլա̈լ կախաղանեն ռըշկեն վըեննը կացած, հենգյ րոպե վախտ տված, վեր խոսե, էն ծմերուկը պերալ ա, վեր քըցալ էն ախճիգյը։ Ընղրանավ ուղիս ա ասե, վեր սերըտ ամեն տեղ հայտնի, վախել մել, քյըեզ թո̈ւլ ըն ըննական։

Խանը ըզետ վեր ըսկնաս ա, ըսես ա. — Քյինա̈ քու սիրածետ նհետ գյանքըտ անց կըցրու։

Էտ տըղան քյիս ա ու̈րա̈ն սիրած ըխճըկանը կոշտը, ըսկսիս ու̈րա̈ն գյանքը օրախ, րախտավեր անց կըցընիս մինչև մհենգյ, մինչև ըսօր էլ։

Էն ասթխոտ երգյինքան իրեք ասթըղ վեր ընգավ. մինը՝ ըսողեն բախտեն, մինը՝ լըսողեն բախտեն, մինն էլ՝ էն բըլկոնան անշուկ տընողեն բախտեն։